Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2020թ. հուլիսի 30-ի թիվ 126-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 8

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 10

1. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքներ 10

2. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ 12

3. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքներ.....14

4. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների դիմաց կանխավճարի տրամադրում 16

5. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն 17

6. ՀՀ էկոնոմիկայի նախարարության թափուր հաստիքներ.....18

7. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ.....20

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 23

8. Հիմնադրամի կողմից հաշվարկված աշխատավարձի և աշխատանքային պայմանագրի միջև տարբերություն.....23

9. Հիմնադրամի կողմից ավել հաշվարկված աշխատավարձ ըստ աշխատանքային տեղեկագրի 24

10. Նախարարության կողմից հաշվարկված աշխատավարձի անալիտիկ բացվածքի և ներկայացված հաշվետվության միջև տարբերություն.....25

11. «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայություններ.....26

12. «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կատարողական 29

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 31

13. Սուբսիդավորման ծրագրի շրջանակներում նպատակային ստուգումներ 31

14. Հավաստագրերի տրամադրման գործընթաց 32

15. Սուբսիդավորման ծրագրի շրջանակներում մոնիթորինգի իրականացում.....33

16. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ստացած տնտեսվարողների գործունեությունը.....34

17. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքներ.....37

18. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ.....38

19. Նախարարության աշխատակցի պարգևատրում 39

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ 41

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 67-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 2. ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն, 3. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում, 5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, 7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1–ից մինչև 2020 թվականի մարտի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի հունիսի 8–ից մինչև 2020 թվականի հուլիսի 24-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակար-

կառուցվածքային ստորաբաժանում[1]

գում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Առուստամյանը:

[1] Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՖԿ	Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները:
ԳՖԿ	Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը:
ՀԱԲԼԾԿ	«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ[2]

2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջին եռամյսակի բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար: Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1022-12001 Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ոլորտում առկա են հավաստագրերի մերժման և վարկերի մոնիթորինգի հետ կապված հսկողության գործընթացների թերացումներ:

1022-11001 ՀՀ խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը պետական աջակցության ոլորտում առկա են գնումների գործընթացին առնչվող անհամապատասխանություններ և հսկողության գործընթացների թերացումներ, ինչպես նաև աշխատավարձի հաշվարկման հետ կապված խեղաթյուրումներ:

1116-11003 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի

լաբորատոր փորձաքննության միջոցառումների գծով առկա են խեղաթյուրումներ՝ կապված փորձաքննություններ իրականացնող կազմակերպության հաշվետվությունների հետ, ինչպես նաև հաշվետվությունների համար հիմք հանդիսացող կատարողականի հետ:

1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ոլորտում՝ առկա են խեղաթյուրումներ և հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված աշխատավարձի հետ, անհամապատասխանություններ թափուր հաստիքների

---

[2] Հաշվեքննչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտումով: Չնայած դրան սույն ընթացիկ եզրակացությունում արտացոլված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքի մասով հաշվեքննության օբյեկտի դիրքորոշումը և դրա վերաբերյալ հաշվոքննողների արձագանքները:

չհամալրման հետ: Արձանագրվել է նաև ներքին աուդիտի գործառույթի, ըստ էության, բացակայություն:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումները / ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 10-րդ և 11-րդ կետերում /, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Կարեն Առուստամյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամի
ժամանակավոր պաշտոնակատար
— հուլիսի 2020 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[3]

2020 թվականի 1-ին եռամսյակ

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		**28,568,148.00**	**5,149,316.50**	**2,411,474.83**	**1,630,592.25**	**2,032,410.07**
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	40,608.00	6,768.00	-	-	-
1022	Գյուղատնտեսության խթանման ծրագիր*	4,049,939.1	966,436.0	806,435.9	784826.26	771796.09
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն*	515,387.20	120,867.40	20,669.30	20,669.30	44,951.27
1058	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,399,569.1	474,351.7	408,317.72	372,420.71	497,916.02
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	30,803.40	6,160.70	2,780.00	2,780.00	2,780.00

[3] Աստղանիշով նշված ծրագրերի մասով կատարվել է 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննություն

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	4,225,163.50	462,209.10	12,655.57	41,571.24	35,908.72
1104	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	183,120.00	30,581.00	-	-	25,866.00
1116	Անասնաբուժական ծառայություններ*	2,616,199.40	714,892.30	55,862.05	55,862.05	100,542.51
1134	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,896,310.80	599,666.10	514,299.89	38,361.72	38,386.64
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	210,156.20	40,371.80	31,371.80	31,371.80	45,617.40
1165	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	1,195,020.00	173,404.00	-	-	254,810.90
1187	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	4,511,135.40	631,129.40	223,476.50	223,476.50	148,450.37
1190	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	6,203,893.00	722,127.30	335,606.10	59,252.67	60,053.37
1224	Բնակչության սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացում	300,000.00	165,600.00	-	-	-
8992	Նախորդ տարիների դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	5,330.78

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքների վերաբերյալ

Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրի իրականացման 1022-11001 (այսուհետ՝ 1022-11001 Ծրագիր) շրջանակներում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կարիքների համար հողային աշխատանքների պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությամբ սահմանվել է՝ «...մասնավորապես 2020 թվականի մարտ ամսվա առաջին կեսին 10-15 օրյա ժամկետում կատարողը պետք է իրականացնի տնկարկների ամբողջ տարածքում առկա երկաթբետոնե հենասյուների (մոտ 3000 միավոր) վերատնկման, նորոգման, լրացման և լարերի ձգման աշխատանքներ, նաև իրականացնի 2,36 հա մակերեսով տնկարկում առկա հենասյուների հանում, փոսերի խորացում (ձեռքով) մինչև 50-60 սմ, սյուների վերատնկում և ամրապնդում...»: Սակայն պայմանագիրը կնքվել է մարտ ամսվա երկրորդ կեսին՝ մարտի 23-ին: Համաձայն մարտ ամսվա աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության՝ փոսերի խորացման աշխատանքները կատարվել են ոչ թե ձեռքով, այլ տեխնիկայով՝ հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով: Ըստ այդմ՝ արձանագրվել է անհամապատասխանություն թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջների և աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության դրույթների միջև:

Համաձայն մարտ ամսվա 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածի (6 աշխատանքային օր) աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության՝ կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,505.0 հազ. դրամ: Կատարողի կողմից 2020 թվականի մարտի 31-ին Հիմնադրամին ներկայացվել է մարտ ամսվա համար նույն գումարի չափով վճարման հաշիվ վավերագիր «հենասյուների վերատնկում, փոխարինում, ամրապնդում, փոսերի խորացում» անվանումով կատարված աշխատանքների համար, որի գինը Հիմնադրամի կողմից հաշվեքննողներին ներկայացված ըստ ամիսների կատարված գնահաշվարկի հետ հնարավոր չէ համադրել, քանի որ աշխատանքների բացվածքը

միանման չէ: Նշվածը առաջացնում է հսկողության գործընթացների թերացում, քանի որ անհասկանալի է, թե ինչպես է Հիմնադրամի կողմից կատարվել աշխատանքների ընդունում, եթե աշխատանքների բացվածքը ենթարկվել է փոփոխության:

Հաշվեքննության ընթացքում նաև պարզվել է, որ հանձնման-ընդունման արձանագրությունում վճարման ենթակա գումարը ներկայացված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի գների:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

«Ն.Շ.» ԱՁ-ի հետ 23.03.2020թ. կնքված N ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանված է եղել փոսերի խորացում /ձեռքով/, որի ընթացքում հողի կարծր շերտի ի հայտ գալու հետևանքով դժվարություն է առաջացել ապահովել 50-60 սմ: Անհրաժեշտություն է առաջացել փոսերի խորացման աշխատանքները կատարել հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով, ինչը նախօրոք համաձայնեցվել է Հիմնադրամի հետ: Հարկ է նշել, որ հորատ կցորդիչի միջոցով փոսերի խորացումը կատարվել է կրկնակի անգամ, հողաշերտի համատարած կարծր լինելու պատճառով, և ըստ այդմ՝ Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել:

Կատարողի կողմից դուրս գրված հաշվի մեջ ծառայությունների /աշխատանքների/ անվանումը, բովանդակությունը «Հողային աշխատանքների» փոխարեն նշված է որպես «հենասյուների վերատնկում, փոխարինում, ամրապնդում, փոսերի խորացում»: Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված նախահաշիվը հիմք է հանդիսացել այգու պահպանման տարեկան բյուջեի հաստատման համար, և սահմանվել է որպես առավելագույն գին գնման գործընթաց սկսելու համար: Աշխատանքները կատարվել են տեխնիկական բնութագրի համաձայն, տվյալ ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, և վճարումը կատարվել է ըստ հաստատված ժամանակացույցի:

Ինչ վերաբերում է հանձնման ընդունման արձանագրությունում վճարման ենթական գումարի ներկայացմանը, հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2020թ. «Գնման գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետի՝ «Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որի ձևը սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հուլիսի 18-ի N 356 հրամանի հավելվածի 8-րդ կետի՝ «Վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը», որն ըստ ժամանակացույցի հաստատված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի գների:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հարկ է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ «Ն.Շ.» ԱՁ-ի հետ պայմանագիրը կնքվել է 23.03.2020 թվականին, իսկ տեխնիկական բնութագրում աշխատանքների սկսման ժամկետ է սահմանվել «մարտ ամսվա առաջին կեսի 10-

15 օրը», իսկ փոսերի խորացման աշխատանքները ձեռքով անելու փոխարեն տրակտորով անելու վերաբերյալ Հիմնադրամի հետ ԱՁ-ի համաձայնեցման փաստաթուղթ հաշվեքննողներին չի տրամադրվել:

ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված Հանձնման-ընդունման արձանագրության ձևում «վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է փաստացի կատարված աշխատանքի գումարը, սակայն այն հաշվեքննվող օբյեկտի կողմից նշվել է մեկ թվով վճարման ժամանակացույցի գումարը, մինչդեռ մարտ ամսվա կատարողականով սահմանված 1,505.0 հազ. դրամ գինը հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված գնահաշվարկի հետ չէր համապատասխանում, դրանով էլ պայմանավորված գինը պետք է ներկայացվեր ըստ կատարված աշխատանքների գների բացվածքի:

Եզրակացություն

Առկա է **անհամապատասխանություն** թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջների և աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրության դրույթների միջև:

Առկա է հսկողության գործընթացների **անհամապատասխանություն՝** կապված աշխատանքների բացվածքի, հանձնման-ընդունման արձանագրության և գնահաշվարկի անհամադրելիության հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին՝

Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների համար կազմված տեխնիկական բնութագրերում հստակ նշել աշխատանքների մեկնարկի ժամկետները և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները համապատասխանեցնել պայմանագրերին կից տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով, այլ՝ ըստ աշխատանքների և ծառայությունների տեսակների, որը պետք է համընկնի գնահաշվարկի հետ:

2. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակներում Հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված հանձնման-ընդունման արձանագրության համաձայն, մարտի 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում (6 աշխատանքային օր) ծառայությունների դիմաց կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,890.0 հազ. դրամ: Համաձայն 2020 թվականի ապրիլի 7-ի վճարման հանձնարարագրի՝ մարտ ամսվա համար Հիմնադրամը Կատարողին վճարել է նույն գումարի չափով «Այգեբաց, էտ, արքատների հեռացում, մոլախոտերի դեմ պայքար» անվանումով կատարված աշխատանքների համար, որի գինը Հիմնադրամի կողմից հաշվեքննողներին ներկայացված ըստ ամիսների կատարված գնահաշվարկի հետ հնարավոր չէ համադրել, քանի որ աշխատանքների բացվածքը վճարման հանձնարարագրում և գնահաշվարկում միանման չէ: Ավելին, մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար:

Հաշվեքննության ընթացքում նաև պարզվել է, որ հանձնման-ընդունման արձանագրությունում վճարման ենթակա գումարը ներկայացված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի:

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակում Հիմնադրամի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջև կնքված Պայմանագրի 3-րդ գլխի համաձայն՝ Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ: Սակայն հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ Նախարարության համապատասխան վարչության կողմից մոնիթորինգ չի իրականացվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հարկ ենք համարում նշել, մոլախոտերի դեմ պայքարն, առհասարակ, կրում է շարունակական բնույթ, իսկ այս տարվա առատ տեղումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել դրանք հեռացնել ոչ միայն մարտ ամսին, այլև յուրաքանչյուր ամիս: Բացի այդ, հավելյալ աշխատանքներ կատարելու համար Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի պահանջել:

Ի լրումն վերոնշյալի, հայտնում ենք, որ գյուղատնտեսական աշխատանքները կատարվել են ոչ միայն աշխատանքային, այլև հանգստյան օրերին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից նշված՝ բազմաթիվ մասնագետների հավանությանը արժանացած գնահաշվարկում, մոլախոտերի դեմ պայքարի ծառայությունները նախատեսվել էր իրականացնել մայիս ամսին, իսկ մարտ ամսին

իրականացնելու համար դրա անհրաժեշտությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթուղթ հաշվեքննողներին չի տրամադրվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջի համաձայն:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված աշխատանքների բացվածքի, վճարման հանձնարարագրի և գնահաշվարկի անհամադրելիության հետ: Նշվածի հետևանքով մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար:

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված նախահաշվային գինը հիմնավորող գնագոյացման մեխանիզմների հետ:

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված Նախարարության կողմից պայմանագրով որպես իրավասություն վերապահված մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին՝

Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններում կամ վճարման հանձնարարագրերում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով, այլ՝ ըստ աշխատանքների և ծառայությունների տեսակների, որը պետք է համընկնի գնահաշվարկի հետ:

Նախարարությանն իրականացնել մոնիթորինգ նշված ծրագրի նկատմամբ՝ ապահովելով առավել արդյունավետ հսկողության գործընթացների կատարումը ծրագրի գնումների գործընթացների նկատմամբ:

3. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակներում, 2020 թվականի մարտի 17-ից 19-ն ընկած ժամանակահատվածում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում նախատեսված է եղել Հիմնադրամի մասնակցությունը Prowein 2020 գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային

ամենամյա ցուցահանդեսին: Սակայն COVID-19 համավարակի պատճառով այն չեղարկվել և տեղափոխվել է 2021 թվականի մարտի 21-ից 23-ը:

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 49-20 Պայմանագրի Հավելված 2-ով ներկայացված Նախահաշվով նախատեսված է 40,500.0 հազ. դրամ՝ ցուցահանդեսի ընդհանուր ծախսերի համար, սակայն առաջին եռամսյակում ծախսերի կատարման հայտում նախատեսված գումարը կազմում է 26,800.0 հազ. դրամ: Փաստացի ծախսվել է 16,386.0 հազ. դրամ՝ տաղավարի նախագծի, կառուցապատման, կահավորման նպատակով:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ Р7\04-02\20 պայմանագիրը «Рест7Арт» ՍՊԸ-ի հետ՝ Prowein Dusseldorf գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար: Ընկերությունը գրանցված է որպես իրավաբանական անձ Ռուսաստանի Դաշնությունում:

Առկա է **անհամապատասխանություն** ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ, 17-րդ կետերի և 2-րդ կետի 1-ին ենթակետի հետ:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, իսկ 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Կարգով սահմանված պահանջները չեն պահպանվել՝ գործընթացը «գնման ընթացակարգով չի իրականացվել» մեկնաբանությամբ: Մինչդեռ, Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, նշված գնման գործընթացն իրականացվում է մեկ անձից գնման ձևով, հետևաբար ընթացակարգը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրության համաձայն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Տաղավարի կառուցապատման համար կնքված պայմանագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 2 փուլով, յուրաքանչյուրը 15,650 եվրո գումարի չափով: Վճարվել է 50 տոկոս կանխավճար տաղավարի նախագծման, ինչպես նաև կառուցապատման անհրաժեշտ նյութերը ձեռքբերելու նպատակով, իսկ աշխատանքների ավարտից հետո վճարվել է պայմանագրի գնի մնացած մասը, որից հետո 02.03.2020թ. պաշտոնական գրությամբ հիմնադրամը տեղեկացվել է 2020թ. ցուցահանդեսի չեղարկման և այն 2021թ. մարտի 21-23-ը տեղափոխման մասին:

Հիմնադրամը տաղավարի նախագծման և կառուցապատման համար տեխնիկական առաջադրանք է ուղարկել մի քանի կազմակերպությունների, որոնք պաշտոնապես գրանցված են Prowein Dusseldor ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից, և գնային առաջարկ և տաղավարի նախնական նախագիծ է ստացել թվով 5 կազմակերպությունների կողմից, որոնցից ամենացածր գին ներկայացրած մասնակիցն այլևս կապի դուրս չի եկել: Ելնելով միասնական տաղավարի անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության, լուսավորության և ֆունկցիոնալ պահանջների անհրաժեշտությունից՝ ընտրվել է 2-րդ ամենացածր գին ներկայացրած մասնակիցը: Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված բոլոր առաջարկները քննարկվել են գինեգործական ընկերությունների հետ, և նախագծի վերջնական ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նաև վերջիններիս կարծիքը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հիմնադրամի կողմից ներկայացված պարզաբանումը չի վերաբերվում արձանագրված անհամապատասխանությանը:

Եզրակացություն

Տաղավարի կառուցապատման աշխատանքների գնման կազմակերպումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությանը:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին՝

Իրականացնել անհրաժեշտ աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը միջազգային ցուցահանդեսներին մասնակցության համար՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների դիմաց կանխավճարի տրամադրման վերաբերյալ

Հիմնադրամը Prowein Dusseldorf գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատումն իրականացնելու նպատակով վճարել է 31,300 եվրոյին համարժեք 16,386.0 հազ. դրամ, որը հանդիսանում է պայմանագրի ընդհանուր գումարի դիմաց 100 տոկոս կանխավճար: «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության և 32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը և առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման և

դրա առավելագույն չափը՝ պայմանով, որ ընտրված մասնակիցը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից:

Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջներին ոչ համապատասխան, Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման և հատկացվել է 100 տոկոս կանխավճար՝ առանց կանխավճարի ապահովման, որը նաև հակասում է Կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջին, այն է՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը:

Հաշվեքննության օբյեկտի արծագանքը

Տաղավարի կառուցապատման համար կնքված պայմանագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 2 փուլով, յուրաքանչյուրը 15,650 եվրո գումարի չափով: Վճարվել է 50 տոկոս կանխավճար տաղավարի նախագծման, ինչպես նաև կառուցապատման անհրաժեշտ նյութերը ձեռքբերելու նպատակով, իսկ աշխատանքների ավարտից հետո վճարվել է պայմանագրի գնի մնացած մասը, որից հետո 02.03.2020թ. պաշտոնական գրությամբ հիմնադրամը տեղեկացվել է 2020թ. ցուցահանդեսի չեղարկման և այն 2021թ. մարտի 21-23-ը տեղափոխման մասին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Քանի որ ամբողջ գործընթացը պետք է իրականացվեր Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրության համաձայն, հետևաբար հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված առարկությունները հիմնավոր չեն:

Եզրակացություն

Առկա է **անհամապատասխանություն** Կարգով սահմանված կանխավճարի տրամադրման ընթացակարգերի և Հիմնադրամի կողմից կանխավճարի սահմանման և վճարման գործընթացի միջև:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին՝

Ապահովել Prowein 2020 գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսին մասնակցելու համար Հիմնադրամի կողմից տաղավարի կառուցապատումն իրականացնելու նպատակով վճարված 31,300 եվրոյին համարժեք 16,386.0 հազ. դրամի՝ պայմանագրի 100 տոկոս կազմող չհիմնավորված կանխավճարի) վերադարձը:

5. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության վերաբերյալ

Հիմնադրամի կողմից սույն գնման գործընթացը չի իրականացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, այնուամենայնիվ, հաշվեքննության շրջանակում Հիմնադրամի կողմից տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որով ներկայացված տեղեկատվությունը հակասում է հաշվեքննության ընթացքում ձեռքբերված փաստերին: Հայտարարությունում արձանագրված է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հայտ են ներկայացրել հինգ մասնակիցներ: Ուստի պետք է կիրառվեր անգործության ժամկետ:

Հայտարարության մեջ արձանագրվել է, որ Հիմնադրամը որոշել է կիրառել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի չափանիշը, սակայն ընտրված մասնակիցը չի հանդիսացել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հայտ են ներկայացրել հինգ մասնակիցներ: Ըստ այդմ՝ արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հիմնադրամը տաղավարի նախագծման և կառուցապատման համար տեխնիկական առաջադրանք է ուղարկել մի քանի կազմակերպությունների, որոնք պաշտոնապես գրանցված են Prowein Dusseldor ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից, և գնային առաջարկ և տաղավարի նախնական նախագիծ է ստացել թվով 5 կազմակերպությունների կողմից, որոնցից ամենացածր գին ներկայացրած մասնակիցն այլևս կապի դուրս չի եկել: Ելնելով միասնական տաղավարի անհրաժեշտ տեխնիկական հագեցածվության, լուսավորության և ֆունկցիոնալ պահանջների անհրաժեշտությունից՝ ընտրվել է 2-րդ ամենացածր գին ներկայացրած մասնակիցը: Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված բոլոր առաջարկները քննարկվել են գինեգործական ընկերությունների հետ, և նախագծի վերջնական ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով նաև վերջիններիս կարծիքը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Քանի որ ամբողջ գործընթացը պետք է իրականացվեր Հայաստանի Հանրապետության գնումների օրենսդրության համաձայն, հետևաբար հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված առարկություններն հիմնավոր չեն:

Եզրակացություն

Գնման գործընթացը չի իրականացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, այնուամենայնիվ, հաշվեքննության շրջանակում Հիմնադրամի կողմից տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն,

որով ներկայացված տեղեկատվությունը հակասում է հաշվեքննության ընթացքում ձեռքբերված փաստերին:

6. ՀՀ էկոնոմիկայի նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը: Ըստ հրամանի նախատեսվում է 446 հաստիքային միավոր, որից 75-ը թափուր պաշտոններ են: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն, ընդհանուր առմամբ, չեն զբաղեցվել, որը հիմնավորվում է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի մարտի 17-ի թիվ 390-Ա հրամանով հաստատված նոր հաստիքացուցակով, որում առկա է 74 թափուր հաստիք: Թափուր հաստիքների համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի (4111 հոդված) գումարից 35,428.0 հազ. դրամն ուղղվել է մարտ ամսին աշխատակիցների պարգևատրմանը՝ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի մարտի 2-ի թիվ 301-Ա հրամանի N 2 հավելվածի:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Համեմատելով հաստիքացուցակով հաստատված պաշտոններ զբաղեցնողներին և «ՀԾ–հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-մարտ ընդլայնված շախմատաձև հաշվետվություններում պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների հետ, պարզվել է, որ առկա են հաստիքային աշխատակիցներ, որոնք պաշտոնը զբաղեցրել են մինչև հաստիքացուցակի հաստատումը (նախորդ տարիներից), սակայն ներառված չեն եղել հաստատվող հաստիքացուցակում՝ այսինքն հաստիքացուցակում նշված են որպես թափուր պաշտոններ: Այդ հաստիքներն են՝

- իրավախորհրդատու նախարարի,
- խորհրդական:

Ի լրումն՝ չնայած հաստիքացուցակով թափուր պաշտոնների առկայությանը՝ թվով 15 աշխատակիցներ արտահաստիքային պայմանագրերով ընդունվել են աշխատանքի: Ընդ որում, ստորև ներկայացված պաշտոններով աշխատակիցներն ընդունվել են աշխատանքի արտահաստիքային պայմանագրերով, այն դեպքում երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է թափուր հաստիք նույն պաշտոններով՝

- իրավախորհրդատու,
- խորհրդական:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունում առկա թափուր պաշտոնները համալրելու համար մրցույթներ չհայտարարելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը. Ինչպես նշված է արձանագրության մեջ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում հայտարարվում են մրցույթ: Ըստ այս հոդվածի նախարարության անվանացանկը հաստատելուց և վերանշանակումներ կատարելուց (վերջին վերանշանակումները կատարվել են 2019թ. դեկտեմբեր ամսին) հետո թափուր հաստիքները պետք է համալրվեին մրցութային կարգով: Միաժամանակ նույն հոդվածի 7-րդ մասով մրցույթի թեստավորումն անցկացնում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում: Քանի որ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակն առ այսօր չի գործարկվել, մրցույթների հայտարարումն համապատասխանաբար հետաձգվել է: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 06.11.2019թ. N 42/44/49836-2019 գրությամբ համապատասխան մարմիններին տեղեկացվել է, որ մինչև քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի գործարկումն անհրաժեշտ է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպումն ու անցկացումն ապահովել ոչ էլեկտրոնային եղանակով: Մրցույթի կազմակերպումն ու անցկացումն ապահովելու համար առաջարկվում է նախարարությունում տեղադրել և գործարկել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված մրցույթի թեստավորման անցկացման էլեկտրոնային ծրագիրը: Այս առումով անհրաժեշտ էր կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 2020 թվականի առաջին կիսամյակում մրցույթի թեստավորման անցկացման էլեկտրոնային ծրագիրը սպասարկելու համար: Պայմանագիրը սեղմ ժամկետներում կնքվել է 2020 թվականի առաջին կիսամյակի սկզբից, իրականացվել են մրցույթների կազմակերպման աշխատանքները և հայտարարվել են մրցույթներ: Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 16.03.2020թ. N 42/44/0208-2020 գրությամբ՝ համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարներին առաջարկվել է դադարեցնել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ հայտարարելու գործընթացը, որից հետո նախարարության կողմից մրցույթներ չեն հայտարարվել: Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 20.07.2020թ. N 42/44/34743-2020 գրությամբ համապատասխան մարմիններին տեղեկացվել է մրցույթների հայտարարությունների հրապարակումը վերսկսելու մասին, և այսուհետ մրցույթների կազմակերպման աշխատանքները կիրականացվեն սահմանված կարգով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Անհամապատասխանությունը հաշվեքննության օբյեկտի կողմից չի առարկվել: Պարզաբանմամբ վկայակոչված՝ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 20.07.2020թ. N 42/44/34743-2020 գրությունը չի վերաբերում հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանին:

Եզրակացություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում չեն ապահովվել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, այն է՝ քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում հայտարարվում են համապատասխան մրցույթներ: Ավելին, որոշ աշխատակիցներ ընդունվել են աշխատանքի արտահաստիքային պայմանագրերով, այն դեպքում, երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է համանման թափուր հաստիք:

7. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձանցից ընտրության միջոցով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականի առաջին եռամսյակում Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում ներքին աուդիտի համակարգը 2020 թվականին փաստացի չի գործել, քանի որ Հայաստանի Հանրապետության վարչապետի N 02/16.4/46533-2019 հանձնարարականի համաձայն համապատասխան ստորաբաժանման գործունեությունը դադարեցվել է, ինչի մասին հայտնվել է նախարարության 03.07.2020 թվականի N01/9380-2020 գրությամբ: Ներկայումս աշխատանքներ են տարվում համապատասխան գործառույթն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի հայտարարման նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Անհամապատասխանությունը հաշվեքննության օբյեկտի կողմից չի առարկվել:

Եզրակացություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում ապահովված չեն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ 2020 թվականի առաջին եռամսյակում չի գործել ներքին աուդիտի համակարգը:

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

8. Հիմնադրամի կողմից հաշվարկված աշխատավարձի և աշխատանքային պայմանագրի միջև տարբերության վերաբերյալ

1022-11001 Ծրագրի հաշվեքննության ընթացքում, համաձայն Հիմնադրամի կողմից առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության 3-րդ կետի, Հիմնադրամի հաստիքների, աշխատանքային պայմանագրերի և աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի՝ ըստ առաջին եռամսյակի ամիսների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հիմնադրամի գործադիր տնօրենի և քաղաքացու միջև 2017 թվականի հունիսի 1-ին կնքված ԱՊ թիվ 17 պայմանագրի 6-րդ կետով սահմանվել է 130.0 հազ. դրամի չափով ամսական աշխատավարձ: Սակայն համաձայն «ՀԾ–հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրի ընդլայնված շախմատաձև հաշվետվության՝ տվյալ անձի հաստիքի գումարը կազմել է 250.0 հազ. դրամ: Արդյունքում, 2020 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Հիմնադրամի աշխատակցին ավելի է հաշվարկվել 360.0 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2017թ. հունիսի 1-ին կնքված ԱՊ/17 աշխատանքային պայմանագրի 6.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն 2019թ. փետրվարի 2-ին կնքված համաձայնագրով՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի թիվ 14 արձանագրության, որով հաշվապահի աշխատավարձը սահմանվել է 250.0հազ. դրամ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից նշված 01.06.2017 թվականին կնքված ԱՊ/17 աշխատանքային պայմանագրի 6.1 կետում կատարված 02.02.2019 թվականի փոփոխությունը հաշվեքննողներին չի տրամադրվել, մինչդեռ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջի համաձայն՝ «Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է՝ հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ»:

Եզրակացություն

2020 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Հիմնադրամի աշխատակցին ավելի է հաշվարկվել 360.00 հազ. դրամ՝ այդ չափով առաջացնելով Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների և ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության **խեղաթյուրում:**

9. Հիմնադրամի կողմից ավելի հաշվարկված աշխատավարձ ըստ աշխատանքային տեղեկագրի

1022-11001 Ծրագրի հաշվեքննության ընթացքում, համաձայն Հիմնադրամի կողմից առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության 3-րդ կետի, Հիմնադրամի հաստիքների, աշխատանքային պայմանագրերի և աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի՝ ըստ առաջին եռամսյակի ամիսների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

Հիմնադրամի գործադիր տնօրենի և քաղաքացու միջև 2010 թվականի հունվարի 20-ին կնքված ԱՊ N25 պայմանագրի 6-րդ կետով ամսական աշխատավարձ է սահմանվել 90.0 հազ. դրամ: Համաձայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի, քաղաքացու 2020 թվականի հունվար ամսվա աշխատած օրերի թիվը կազմել է 8 օր: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկվել է 9 աշխատանքային օրվա համար՝ ավելի հաշվարկելով 5625 դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2020թ. հունիսի 20-ին կնքված ԱՊ/25 պայմանագրի 6.1 կետի համապատասխան հավաքարարի հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկելիս հաշվի չի առնվել ՀՀ կառավարության հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխելու մասին N 42-Ն որոշումը, որի արդյունքում աշխատավարձը հաշվարկվել է 9 օրվա համար: Համաձայն աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի՝ աշխատակցի առաջիկա ամսվա աշխատավարձից կկատարվի պահում ավելի վճարված 5,626 դրամի չափով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից չի առարկվել արձանագրված խեղաթյուրումը:

Եզրակացություն

Ավելի հաշվարկված գումարի չափով Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում և ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվությունում առաջացել է **խեղաթյուրում:**

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին՝

Աշխատավարձի հաշվարկը կատարել բացառապես՝ հիմնվելով աշխատավարձի համար հիմք հանդիսացող փաստաթղթերի վրա:

10. Նախարարության կողմից հաշվարկված աշխատավարձի անալիտիկ բացվածքի և ներկայացված հաշվետվության միջև տարբերության վերաբերյալ

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման՝ 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի վերաբերյալ՝ ըստ ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեով նշված հոդվածով ֆինանսավորումը կազմել է 246,287.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 227,425.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 352,333.0 հազ. դրամ գումար:

Նախարարության կողմից, հաշվեքննություն իրականացնելու նպատակով, տրամադրված երեք ամիսների՝ «ՀԾ–հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-մարտ ընդլայնված շախմատաձև հաշվետվության համաձայն՝ նշված հոդվածով փաստացի ծախսը՝ կազմել է 304,487.04 հազ. դրամ գումար, որից 268,960.0 հազ. դրամը կազմել է աշխատավարձ, իսկ 35,428.0 հազ. դրամը՝ պարգևատրում՝ ձևավորված աշխատավարձի ֆոնդի խնայողություններից:

Այսպիսով, առկա է **խեղաթյուրում** ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվությունում՝ 47,945.04 հազ. դրամի չափով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագիր 1058-ի, միջոցառում 11001-ի 4111 «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության և անալիտիկ հաշվառման տվյալների միջև 47,945.0 հազ. դրամի տարբերությունն առաջացել է մեխանիկական սխալի/վրիպակի հետևանքով: Նույն հոդվածի վերաբերյալ կազմված 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվությամբ վրիպակն արդեն իսկ ուղղված է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Խեղաթյուրումը հաշվեքննության օբյեկտի կողմից չի առարկվել: Ինչ վերաբերվում է արդեն իսկ ուղղված հաշվետվությանը, ապա դա վերաբերում է առաջին կիսամյակի հաշվետվությանը և այն հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածին չի վերաբերում: Նշված հաշվետվության արժանահավատությանը ՀՀ հաշվեքննիչ պալատը կանդրադառնա հաջորդ եռամսյակների հաշվեքննության ընթացքում:

Եզրակացություն

Ավելի ներկայացված գումարի չափով ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվությունում առաջացել է խեղաթյուրում:

11. «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ

Ըստ ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում Նախարարությանը 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 61,005.5 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 40,670.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 40,670.3 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշմամբ հաստատված «Անասնաբուժական ծառայություններ» թիվ 1116 Ծրագրի «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութերի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» թիվ 11003 միջոցառման իրականացման նպատակով 2020 թվականի փետրվարի 10-ին Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագիր: Պայմանագրով՝ ինչպես որ նախատեսվել է ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ՝ ֆինանսական աջակցության չափը պետք է կազմի մինչև 338,919.4 հազ. դրամ:

Ըստ պայմանագրին կից հավելված 1-ի՝ «Ծրագրի միջոցառումները և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների» 2020 թվականի առաջին եռամսյակի լաբորատոր փորձաքննությունների քանակը պետք է կազմեր 208,605

փորձաքննություն, մեկ միավոր փորձաքննության միջին գինը՝ 322.19 դրամ: Իսկ պայմանագրին կից հավելված 2-ով՝ «Ծրագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի» առաջին եռամսյակի համար նախատեսվել է 61,005.5 հազ. դրամ:

Կազմակերպությունն առաջին եռամսյակի համար նախարարություն է ներկայացրել երկու հաշվետվություն, որոնց ամփոփ ցուցանիշները ներկայացված են ստորև՝

Համաձայն բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն	**Առաջին եռամսյակի համար նախատեսված ցուցանիշներ**			
	Ճշտված պլան (հազ.դրամ)	**Ֆինանսավորում (հազ.դրամ)**	**Դրամարկղային ծախս (հազ.դրամ)**	**Փաստացի ծախս (հազ.դրամ)**
	61,005.5	40,670.3	40,670.0	40,670.3

Համաձայն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության	**Առաջին եռամսյակի համար նախատեսված ցուցանիշներ**		
	Նախատեսված (հատ)	**Փաստացի (հատ)**	**Տարբերություն (հատ)**
	208,605	126,231	82,374

Հակառակ վերը ներկայացված ցուցանիշների՝ համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից հաշվեքննության շրջանակում ներկայացված թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին եռամսյակում փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի՝ առաջին եռամսյակում կատարվել է 92,659 լաբորատոր փորձաքննություն, որի ընդհանուր գումարը կազմել է 29,853.8 հազ. դրամ: Արդյունքում, պարզվեց, որ առաջին եռամսյակում կատարվել է 33,572 հատով (126,231-92,659) ավելի պակաս փորձաքննություն, որի գումարը կազմում է 10,816.5 հազ. դրամ (33,572x322.19): Ընդ որում, փորձաքննությունների պակաս թվով կատարված լինելու փաստը նաև Կազմակերպության տնօրենի կողմից ներկայացվել է Նախարարությանը՝ առ 2020 թվականի մայիսի 13-ի թիվ 58-20 գրությամբ: Հարկ է նշել, որ ՀԱԲԼԾԿ-ն Նախարարությանը ճշտված հաշվետվություններ չի ներկայացրել:

Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում նշված փաստացի կատարված

լաբորատոր հետազոտությունների համար նախատեսված ֆինանսական հաշվետվություններում փաստացի ծախսը 40,670.3հազ. դրամի փոխարեն պետք է լիներ 29,853.8 հազ.դրամ, ինչը հանդիսանում է ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի հաշվետվության անճիշտ ներկայացումը պայմանավորված է արդյունքային ցուցանիշները ֆինանսավորված ծավալին համապատասխանեցնելու հանգամանքով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության համաձայն, նախատեսված 469361 հատ 145735.3 հազ. դրամ արժողությամբ փորձաքննությունների դիմաց փաստացի կատարվել են 488415 հատ 157362.4 հազ. դրամի փորձարկումներ: Այսպիսով, առաջին եռամսյակի անճշտությունը վերացվել է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Արձանագրված խեղաթյուրումն հաշվեքննության օբյեկտի կողմից չի առարկվել ընդունվել է և միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրված անճշտությունը վերացվել է, ինչի արժանահավատությանը Հաշվեքննիչ պալատը կանրադառնա Պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում:

Եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններում առկա է ***խեղաթյուրում***, փաստացի կատարվել է 92,659 լաբորատոր փորձաքննություն, սակայն ներկայացվել է ավելի շատ՝ 126,231 փորձաքննություն, որի արդյունքում փաստացի ծախսը 40,670.3 հազ. դրամի փոխարեն պետք է լիներ 29,853.8 հազ. դրամ կամ տարբերությունը կազմում է 10,816.5 հազ. դրամ:

12.«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կատարողականի վերաբերյալ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ թիվ 1116 ծրագրի 11003 միջոցառման՝ ՀԱԲԼԾԿ-ի կողմից առաջին եռամսյակում իրականացված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի համաձայն, 92,659 հատ լաբորատոր փորձաքննությունից 91,539 հատը հանդիսանում են բրուցելոզի փորձաքննություններ: Բրուցելոզի փորձաքննությունների իրականացման համար,

ՀԱԲԼԾԿ-ն ստանում է նմուշներ «Գյուղատնտեսական Ծառայությունների Կենտրոն» ՊՈԱԿ–ից, որը կատարում է համապատասխան նմուշառումներ: Համաձայն «Գյուղատնտեսական Ծառայությունների Կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի վերաբերյալ ներկայացված՝ Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության, աշխատանքները չեն իրականացվել և Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀԱԲԼԾԿ-ին չի ներկայացրել նմուշ բրուցելոզի փորձաքննությունների համար:

ՀԱԲԼԾԿ-ի և Նախարարության միջև կնքված Պայմանագրի 2.3.1 կետի պահանջների համաձայն՝ Նախարարությունը ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Սակայն, հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մոնիթորինգ չի իրականացվել և չեն իրականացվել համապատասխան հսկողության գործընթացներ վերոնշյալ անհամապատասխանությունները կանխարգելելու կամ բացահայտելու և ուղղելու համար, Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.1-րդ կետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1940-Լ որոշման հավելվածի 5-րդ գլխի 27-րդ կետի, «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը /այսուհետ՝ ՊՈԱԿ/ հանձնված է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի /այսուհետ՝ տեսչական մարմին/ ենթակայությանը, որը հանդիսանում է ՊՈԱԿ-ի վերադաս լիազոր պետական մարմինը, և ՊՈԱԿ-ն իր կանոնադրական գործառույթներից /այդ թվում՝ կենդանիների հիվանդությունների ախտորոշման և շճաբանական հետազոտությունների/ բխող տվյալ տարվա համար հաստատված բյուջեով սահմանված մոնիթորինգային և ոչ մոնիթորինգային ծրագրերն իրականացնում է բացառապես Տեսչական մարմնի միջոցով և վերահսկողությամբ: Այս առումով բացառություն չեն նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված N 1116 «Անասնաբուժական ծառայություններ» Ծրագրի N 11003 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառումների մասով ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված թիվ 30-20 պայմանագրի շրջանակներում իրականացվող լաբորատոր փորձաքննությունները, որոնց իրականացման համար ՊՈԱԿ-ը լաբորատոր նմուշները /«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ աշխատող համայնքային անասնաբույժների կողմից խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից վերցված արյունը/ ստանում է Տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակցի /տեսուչի/ ուղեկցող նամակով: ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում լաբորատոր փորձաքննության /թվով 92659 հատ, որից բրուցելոզի ախտորոշում՝ 91539 հատ/ ենթարկված բոլոր

լաբորատոր նմուշների տեսչական ուղեկցող նամակներն առկա են և անհրաժեշտության դեպքում ՊՈԱԿ-ը պատրաստակամ է տրամադրելու դրանց լուսապատճեները:

Հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության կատարվել է 478449 հատ նմուշառում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից որևէ առարկություն չի ներկայացվել այն մասին, որ նախարարությունը չպետք է իրականացներ պայմանագրով նախատեսված և իրեն վերապահված մոնիթորինգի աշխատանքները, իսկ ինչ վերաբերում է նրան, որ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը իրականացնում է մոնիթորինգային աշխատանքներ, ապա դա որևէ առնչություն չունի հաշվեքննության օբյեկտի և հաշվեքննության առարկայի հետ:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.1 կետով սահմանված պահանջների հետ՝ մասնավորապես Նախարարությունը չի կատարել մոնիթորինգ ՀԱԲԼԾԿ-ի կատարողականի նկատմամբ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Նախքան յուրաքանչյուր եռամսյակ ստացված հաշվետվության հաստատումը կատարել մոնիթորինգ ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված կատարողական ցուցանիշների նկատմամբ:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

13. Սուբսիդավորման ծրագրի շրջանակներում նպատակային ստուգումներ

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ԳՖԿ–ի և ՖԿ-ի միջև կնքված պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ ԳՖԿ–ն (պայմանագրում ներկայացված է որպես Ֆինանսավորող) իրավասու է իրականացնել վարկերի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումներ: Սակայն ԳՖԿ–ի կողմից չի իրականացվել որևէ տեսակի ստուգում և պայմանագրով նախատեսված իրավասությունը փաստացի չի իրացվել, ինչը հսկողության գործընթացների թերացում է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ֆինանսավորողը՝ ԳՖԿ-ն, իրավասու է իրականացնել վարկերի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումներ: Քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման, մոնիթորինգի իրականացման գործառույթը փոխանցվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը (նախկինում իրականացվել է ԳՖԿ-ի կողմից), ուստի սուբսիդավորման պայմանագրերում նշված կետը պահպանվել է այն նպատակով, որ ԳՖԿ-ն իրավունք ունենա ֆինանսական կառույցներից ստանալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն վարկառուների և վարկերի նպատակային օգտագործման վերաբերյալ, որի միջոցով նաև իրականացվում է վարկերի նպատակային օգտագործման փաստաթղթային մոնիթորինգ: Այս կետով նախատեսվել է, որ ԳՖԿ-ն իրավասու է իրականացնել, որպեսզի հետագայում տեղեկատվություն պահանջելու դեպքում այն չհանդիսանա բանկային գաղտնիք: Այս կետը ձևակերպվել է տվյալ ձևով, քանի որ ըստ ֆինանսական հաստատությունների ցանկացած տեղեկատվության տրամադրումը ենթադրում է նաև ստուգում:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ պայմանագիրը և այդ գործընթացը ներկայումս ուսումնասիրվում է դրանցում փոփոխություններ կատարելու նպատակով և այդ փոփոխությունների իրականացման գործընթացում հաշվի կառնվեն նաև արձանագրված դիտողությունները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից չի առարկվել արձանագրված բացթողումը: Ինչպես նաև հաշվեքննության օբյեկտի կողմից նշվել է, որ տարվում են աշխատանքներ գործընթացում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, հաշվի առնելով հաշվեքննողների կողմից արձանագրված դիտողությունները:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկերի

նպատակային ստուգումների հետ, քանի որ պայմանագրի կողմ հանդիսացող անձը չի օգտվում իր իրավասությունից, իսկ փոխարենը այդ իրավասությունն իրականացնում է Նախարարությունը:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Պայմանագիրը կնքել եռակողմ՝ կատարելով պարտականությունների և իրավասությունների օպտիմալ բաշխում:

14. Հավաստագրերի տրամադրման գործընթաց

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին մասնակցելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ՝ Հավաստագիր) տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի ապրիլի 22-ի թիվ 93-Ա հրամանով հաստատվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգ (այսուհետ՝ Կարգ): Հավաստագրի տրամադրումն իրականացվում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Կարգում բացակայում են հստակ դրույթներ Հավաստագրի տրամադրման մերժման վերաբերյալ: Եթե տնտեսվարողին մերժվում է Հավաստագրի տրամադրումը, ապա այն իրականացվում է բանավոր կարգով՝ չհիմնավորելով այն որևէ հաստատված ձևաչափով և ընթացակարգով, ինչը հաշվեքննողների գնահատմամբ ռիսկային է դարձնում հսկողության գործընթացը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ գյուղատնտեսության նախարարի ապրիլի 22-ի N 93-Ա հրամանով հաստատվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգ (այսուհետ՝ Կարգ), որում բացակայում է Հավաստագրերի տրամադրման մերժման ընթացակարգը: Հավաստագրի տրամադրումը մերժվում է, եթե հայտատուն բացակայում է երկօրյա դասընթացներից կամ դասընթացի ավարտին չի ներկայացնում ակնկալվող վարկային միջոցների ծախսման վերաբերյալ հաշվարկային ձևաթուղթը:

Մերժումների թիվը 2020 թվականի առաջին եռամսյակում կազմել է մասնակիցների 0,099% (մասնակիցների թիվը կազմել է 3044, որից Հավաստագիր ստացել են 3041-ը, Հավաստագիր չի ստացել-3-ը), ինչը մեր գնահատմամբ չնչին ռիսկ է ներկայացնում:

Վերոնշյալ բացթողումը առաջիկայում կշտկվի հրամանում փոփոխություններ կատարելու միջոցով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից չի առարկվել արձանագրված թերությունը:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված հավաստագրերի մերժման հետ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Կարգում դրույթներ սահմանել Հավաստագրի մերժման գործընթացի վերաբերյալ:

15. Սուբսիդավորման ծրագրի շրջանակներում մոնիթորինգի իրականացում

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում), «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգն իրականացվում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից՝ վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության համապատասխան վարչության կողմից մոնիթորինգ իրականացնելու համար որևէ հաստատված ընթացակարգ չկա: Հետևաբար, ողջ ընթացակարգն իրականացվում է չկանոնակարգված ձևաչափով: Համաձայն վարչության ղեկավարի՝ մոնիթորինգն իրականացվում է երկու փուլով՝ առաջնային և երկրորդային: Առաջնային փուլի գործընթացն իրականացվում է մարզային կենտրոնների աշխատակիցների միջոցով՝ կատարելով այցելություններ ընտրանքում ներառված վարկառու տնտեսվարողներին: Արդյունքում կազմվում է մոնիթորինգի հարցաթերթիկ, որն ուղարկվում է վարչությանը: Իրականացված մոնիթորինգի արդյունքներն ամփոփվում և վերստուգվում են Նախարարության վարչությունում, որից հետո անհրաժեշտության դեպքում իրականացվում է երկրորդային մոնիթորինգ: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ երկրորդային մոնիթորինգը չի փաստաթղթավորվում, ինչպես նաև նախատեսված չէ գործընթաց այն դեպքում, երբ որևէ առաջնային մոնիթորինգի գործընթաց գնահատվել է անբավարար, ինչը հսկողության գործընթացի թերացում է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման V գլխի 17-րդ կետի՝ «Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը՝ վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով»: Մոնիթորինգն իրականացվում է հարցումների միջոցով, հստակ հետազոտական հարցումների մեթոդաբանությամբ և գործիքակազմով՝ ապահովելով սուբյեկտների տնտեսություն այցի ընթացքում վարկային միջոցներով ձեռք բերված ապրանքների լուսանկարումը:

Մոնիթորինգի իրականացման կարգը սահմանող փաստաթուղթը գտնվում է մշակման փուլում, սակայն մոնիթորինգի արդյունքում կազմվող վերլուծության մեջ հատուկ նշված են իրականացման ընթացակարգային դրույթները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել չի առարկվել արձանագրված բացթողումը: Վեց ամիսների հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից անդրադարձ կկատարվի վերոնշյալ բացթողումների շտկման վերաբերյալ:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Սահմանել հստակ ընթացակարգեր մոնիթորինգի իրականացման համար, այդ թվում՝ առաջնային և երկրորդային մոնիթորինգի ընթացքում կազմվող ձևաթղթերի և հաջորդական քայլերի վերաբերյալ:

16. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ստացած տնտեսվարողների գործունեությունը

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում իրականացվող հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ստորև ներկայացված վարկառու տնտեսվարողների գործունեությունը ժամանակավոր դադարեցված է՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ–ի էլեկտրոնային համակարգի կամ վերջիններս հաշվառումից հանված են ըստ նշված համակարգի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի դրությամբ:

Տնտեսվարող	Գործունեության մարզ	Գործունեության բնակավայր	Կարգավիճակ
«Կ.Հ.Գ.»ՍՊԸ	Արագածոտն	Կարբի	Ժամանակավոր դադարեցված
«Հ.Կ.» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ	Շիրակ	Հայկավան	Ժամանակավոր դադարեցված
«Մ.» ՍՊԸ	Արագածոտն	Մելիքգյուղ	Ժամանակավոր դադարեցված
«Ա.Ս.Ա.» ԱՁ	Գեղարքունիք	գ. Ակունք	Ժամանակավոր դադարեցված
«Ա.Ա.Հ.» ԱՁ	Լոռի	Հարթագյուղ	Հաշվառումից հանված
«Ա.Շ.» ԱՁ	Երևան	Մալաթիա-Սեբաստիա	Ժամանակավոր դադարեցված
«Ա.Լ.Գ» ԱՁ	Երևան	Արաբկիր	Ժամանակավոր դադարեցված
«Ա.Ս.Ս» ԱՁ	Արարատ	Արևշատ	Ժամանակավոր դադարեցված
«Ա.Թ.» ԱՁ	Արմավիր	Արագած	Ժամանակավոր դադարեցված
«Բ.Գ.Է.» ԱՁ	Գեղարքունիք	գ. Վարդենիս	Ժամանակավոր դադարեցված
«Գ.Մ.Պ.» ԱՁ	Արմավիր	Արմավիր	Ժամանակավոր դադարեցված
«Գ.Բ» ԱՁ	Սյունիք	Սիսիան	Ժամանակավոր դադարեցված
«Գ.Ն.Բ.» ԱՁ	Կոտայք	Գառնի	Ժամանակավոր դադարեցված
«Լ.Յ» ԱՁ	Արմավիր	Շահումյանի թռչնաֆաբրիկա	Ժամանակավոր դադարեցված
«Կ.Բ.Հ.» ԱՁ	Տավուշ	գ. Սևքար	Ժամանակավոր դադարեցված
«Հ.Հ.Ա.» ԱՁ	Արմավիր	Նոր Արտագերս	Ժամանակավոր դադարեցված
«Հ.Ս.Մ.» ԱՁ	Գեղարքունիք	Կարմիրգյուղ	Ժամանակավոր դադարեցված
«Մ.Ն.Զ.» ԱՁ	Արարատ	Ազատավան	Ժամանակավոր դադարեցված
«Մ.Խ.Թ.» ԱՁ	Արարատ	ք.Մասիս	Ժամանակավոր դադարեցված
«Մ.Մ.Ս.» ԱՁ	Կոտայք	գ. Գողթ	Ժամանակավոր դադարեցված
«Ն.Ե.» ԱՁ	Արմավիր	Արշալույս	Հաշվառումից հանված
«Ռ.Հ.Կ» ԱՁ	Արմավիր	Քարակերտ	Հաշվառումից հանված
«Ս.Ս.Ս.» ԱՁ	Արմավիր	Արմավիր	Ժամանակավոր դադարեցված

Նշված տնտեսվարողների մասով առկա է ռիսկ՝ կապված վարկային միջոցների նպատակային օգտագործման հետ, որոնց մասով 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ: Ի լրումն՝ Վարչության 2020 թվականի ընթացքում մոնիթորինգի ենթակա տնտեսվարողների ընտրանքում ներառվել են միայն 6 իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության արձանագրությունում հիշատակվում է, որ 22 անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հանդիսացող տնտեսվարողների գործունեությունը դադարեցվել է, կամ վերջիններս հանված են հաշվառումից՝ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային համակարգի:

Նշված 22 տնտեսվարողները չեն վարկավորվել 2020 թվականի ընթացքում, այսինքն՝ եթե վարկավորվելուց հետո վերջիններիս գործունեությունը դադարեցվել է, դա չի ենթադրում, որ վարկի կամ վարկի վճարումները պետք է մարված լինեին մինչև գործունեության դադարեցումը կամ հաշվառումից հանվելը:

Ինչ վերաբերվում է 2020 թվականի առաջին կիսամյակի մոնիթորինգի ենթարկվող սուբյեկտների մեջ դրանց ընդգրկված չլինելուն, ապա հարկ է նշել, որ ընտրանքի համար չափորոշիչ չի հանդիսանում տնտեսվարողի՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու հանգամանքը:

Միաժամանակ ցանկում նշված վարկառուները, որոնց գործունեությունը համաձայն ՊԵԿ էլեկտրոնային համակարգի ժամանակավորապես դադարեցված է, դեռևս հիմք չի հանդիսանում, որ առկա է ռիսկ վարկերի նպատակային օգտագործման հետ կապված: Քանի որ ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վարկերի վարկունակությունը գնահատվում է ֆինանսական հաստատությունների կողմից և Ծրագրով ամրագրված չէ, որ եթե իրավաբանական անձը ժամանակավորապես դադարեցնում է գործունեությունը, ուստի դա հանգեցնում է վարկի նպատակային օգտագործման ռիսկերի և կարող է դադարեցվել սուբսիդավորումը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումները հաշվի առնելով, պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից անդրադարձ կկատարվի վերոնշյալ խնդրին առավել մանրամասն:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ:

Առաջարկություն հաշվեքննվող օբյեկտին

Ամրագրել հստակ ընթացակարգեր մոնիթորինգի իրականացման համար՝ ներառյալ տնտեսվարողների ռիսկայնության համար համապատասխան ռիսկերի

չափորոշիչների սահմանում և նշված ռիսկային տնտեսվարողների՝ վարկային միջոցների հաշվին իրականացված գործունեության մոնիթորինգ:

17.Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող հողային աշխատանքներ

1022-11001 Ծրագրի իրականացման շրջանակում Հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների ձեռքբերման նպատակով Հիմնադրամի կողմից 2020 թվականի փետրվարի 24-ին կազմված գնման հայտում տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների համար միավորի գին է սահմանվել (նախահաշվային գին) 6,500.0 հազ. դրամը: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ բացակայում է նախահաշվային գինը հիմնավորող հաստատված գնագոյացման մեխանիզմ: Փոխարենը տրամադրվել է գնահաշվարկ:

Գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում հաղթող է ճանաչվել “Ն.Շ.» ԱՁ-ն, որի հետ 2020 թվականի մարտի 23-ին կնքվել է «Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» պայմանագիրը՝ 4,300.0 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հողային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմվել է գնման հայտ, որի համար գնման պլանում որպես նախահաշվային գին է սահմանվել 6,500 հազ. ՀՀ դրամը: Նախահաշվային գնի սահմանման համար հիմք է հանդիսացել հիմնադրամում աշխատող խաղողագործ-գինեգործ գիտությունների թեկնածու երկու մասնագետների կողմից կազմված նախահաշիվը, որն ուղարկվել է կարծիքի Երևանի կոնյակի գործարանի և «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսության փորձագետներին, ինչից հետո միայն ներկայացվել է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը, որի կազմում նույնպես կա ագրոնոմ-խաղողագործ, և ըստ այդմ, հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից, որի մասին բանավոր տեղյակ է պահվել ՀՀ հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված նախահաշիվ հաշվեքննողներին չի տրամադրվել, մինչդեռ համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջի: Հարկ է նշել, որ տրամադրվել է չհաստատված գնահաշվարկ, որում ըստ աշխատանքների տեսակների և գների գումարը չի համապատասխանում 6,500.0 հազ. դրամ նախահաշվային գնին: Ավելին, այն չի համապատասխանում նաև մարտ ամսվա կատարողականով սահմանված 1,505.0 հազ. դրամ գնին:

18.Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող այգիների պահպանման աշխատանքներ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակում Հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով Հիմնադրամի կողմից 2020 թվականի փետրվարի 24-ին կազմված գնման հայտում տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների համար միավորի գին է սահմանվել (նախահաշվային գին) 9,500.0 հազ. դրամը: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ բացակայում է նախահաշվային գինը հիմնավորող գնագոյացման մեխանիզմը: Փոխարենը տրամադրվել է գնահաշվարկ:

Գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում հաղթող է ճանաչվել “Ն.Շ.» ԱՁ-ն, որի հետ 2020 թվականի մարտի 23-ին կնքվել է «Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/1» պայմանագիրը՝ 9,450.0 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Այգիների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով որպես նախահաշվային գին է սահմանվել 9,500 հազ ՀՀ դրամը, որի համար կրկին հիմք է հանդիսացել հիմնադրամում աշխատող խաղողագործ – գինեգործ գիտությունների թեկնածու երկու մասնագետի կողմից կազմված նախահաշիվը, որն ուղարկվել է Երևանի կոնյակի գործարանի և «Ոսկերհատ» ուսումնափորձնական տնտեսության փորձագետների կարծիքի, ինչից հետո միայն ներկայացվել է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը, որի կազմում նույնպես կա ագրոնոմ-խաղողագործ, և ըստ այժմ, հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից, որի մասին բանավոր տեղյակ է պահվել ՀՀ հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Այգիների պահպանման ծառայությունների ձեռք բերման համար նույնպես Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված նախահաշիվ հաշվեքննողներին չի տրամադրվել, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջի համաձայն, այլ տրամադրվել է չհաստատված գնահաշվարկ, որում ըստ ծառայությունների տեսակների և գների գումարելուց ոչ մի ձևով 9,500.0 հազ. դրամ նախահաշվային գինը չի ստացվում, ավելին չի ստացվում նաև մարտ ամսվա կատարողականով սահմանված 1,890.0 հաղ.դրամ գինը:

19.Նախարարության աշխատակցի պարգևատրման վերաբերյալ

1058-11001 ծրագրով՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման՝ 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածի վերաբերյալ՝ ըստ ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեով նշված հոդվածով ֆինանսավորումը կազմել է 49,984.0 հազ. դրամ գումար, դրամարկղային ծախսը՝ 49,984.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 42,025.0 հազ. դրամ: Համաձայն նախարարության կողմից տրամադրված առաջին եռամսյակի ընդլայնված հաշվետվության (շախմատաձև) հաշվետվությունների՝ նշված հոդվածով ծախսվել է 42,025.0 հազ. դրամ գումար, որից 10,612.0 հազ. դրամը հունվար-փետրվար ամիսներին ուղղվել է Նախարարության ղեկավար կազմի պարգևատրմանը (Գաղտնի հրամաններ), իսկ 31,414.0 հազ. դրամը՝ Նախարարության աշխատակիցների պարգևատրմանը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ նշված հոդվածով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի փետրվարի 1-ի թիվ 142-Ա հրամանով նախարարի խորհրդականը պարգևատրվել է 270.0 հազ. դրամով: Հրամանում պարգևատրման հիմքը բացակայում է: Աշխատակցի կողմից 2020 թվականի փետրվարի 1-ին ներկայացվել է աշխատանքից ազատման դիմում, որը մուտքագրվել է Նախարարության ընդհանուր բաժին 2020 թվականի փետրվարի 4-ին, ինչը հիմնավորվում է նաև Նախարարության https://mul2-mineconomy.gov.am/ համակարգով և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի փետրվարի 3-ի թիվ 154-Ա հրամանով աշխատակիցն ազատվել է աշխատանքից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի 1058, միջոցառում 11001 գծով 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված վճարումների վերաբերյալ հաշվեքննության արձանագրությամբ նշվել է , որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 01.02.2020թ. N 142-Ա հրամանով նախարարի խորհրդականը պարգևատրվել է 270.0 հազ. դրամ գումարով և հրամանով պարգևատրման հիմքը բացակայում է: Մինչդեռ հրամանն արձակվել է հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի 9-րդ մասը, ըստ որի «Պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և /կամ որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողների կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և(կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Աշխատակցի պարգևատրման համար աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և(կամ) հատուկ առաջադրանքների կատարումը հիմնավորելու որևէ գրավոր փաստաթուղթ հաշվեքննության ընթացքում չի ներկայացվել /«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի համաձայն/: Ինչ վերաբերվում է պարզաբանման մեջ նշված իրավական հիմքերին, ապա այն վերաբերվում է պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի իրավասություններին, որը կարող է իրացվել կոնկրետ պայմաններում, այն է՝ հատուկ առաջադրանք և/կամ որոկյալ այլ աշխատանք:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվում է՝

1. Իրականացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի ապրիլի 22-ի թիվ 93-Ա հրամանով հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգի վերամշակում՝ հաշվի առնելով հաշվեքննության ընթացքում արձանագրած թերացումները:
2. Սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Ֆինանսական կառույցների, ԳՖԿ-ի և Նախարարության միջև:
3. Քանի որ նպատակային ստուգում իրականացնում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչությունը, լիազորել վերջինիս՝ իրականացնելու նպատակային ստուգումներ:
4. Մշակել և հաստատել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգն անցկացնելու ընթացակարգ:
5. Ստեղծել սուբսիդավորվող տնտեսվարող սուբյեկտների /վարկառու/ միասնական ռեգիստր՝ հաշվի առնելով հանրության կողմից Ծրագրից օգտվելու մեծ պահանջարկը:
6. Ապահովել Prowein 2020 գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսին մասնակցելու համար Հիմնադրամի կողմից տաղավարի կառուցապատումն իրականացնելու նպատակով վճարված 31,300 եվրոյին համարժեք 16,386 հազ. դրամի՝ պայմանագրի 100 տոկոս կազմող չհիմնավորված կանխավճարի վերադարձը:
7. Մշակել և հաստատել Հիմնադրամի միջոցներով ձեռքբերվող աշխատանքների և ծառայությունների համար սահմանված նախահաշվային գների գնագոյացման մեխանիզմները:
8. Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող աշխատանքների համար կազմված տեխնիկական բնութագրերում հստակ նշել աշխատանքների սկսման ժամկետները: Աշխատանքների հանձնման-ընդունման

արձանագրությունները համապատասխանեցնել պայմանագրերին կից տեխնիկական բնութագրի պահանջներն:

9. Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրություններում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով, այլ ըստ աշխատանքների և ծառայությունների տեսակների:

10. Առաջին եռամսյակի ընթացում ՀԱԲԼԾԿ-ի կողմից չկատարված լաբորատոր հետազոտությունների դիմաց ավելի ստացված գումարները հետ վերադարձնել ՀՀ պետական բյուջե: